



ՄԵՐ ԱՆԿԻԻՆԵՆ

Ի՞նչ է Հոկլանտի Փնտռածը

Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ համաձայնություն եզրեր գտնելու առաքելություն ունեցող Մինսկի խումբին ներս ամերիկացի համանախագահ Ռիչարդ Հոկլանտ, իր պաշտօնավարման աւարտին կատարեց զգայացուց յայտարարություն, ներկայացնելով հարցի լուծման այն կետերը, որոնք ծանօթ են նաև, որպես «մատրիտեան սկզբունքներ» անունով:

Թեև դեսպանի յայտարարած կետերը զաղտնիք չէին եւ անոց մասին տարբեր առիթներով հրապարակումներ եղած էին, սակայն այս առաջին անգամն է որ, Մինսկի խումբի մէկ անդամը կէտ առ կէտ կը ներկայացնէ մատրիտեան այն սկզբունքները, որոնք շուրջ, կարգ մը շրջանակներու պնդումով, Հայաստան տուած է իր նախնական համաձայնությունը, սակայն Ատրպէյճանն ոչ:

Ամերիկացի դիւանագետի յայտարարությունը մտահոգութեան մեծ ալիք յառաջացուց Հայաստանի քաղաքական շրջանակներուն մօտ: Ոմանք այս կետերու հրապարակման մէջ տեսան Ամերիկայի պաշտօնական դիրքորոշումի նպաստ Ատրպէյճանի: Ուրիշներու մեկնաբանությունը այն էր որ, Միացեալ Նահանգները կը փորձէ իր դիրքերը ամրապնդել կովկասեան տարածաշրջանէն ներս՝ հաւասարակշռելու համար ռուսաստանի ազդեցութիւնը:

Մենք հակուած ենք առաջին տեսակէտին, նկատի առնելով, որ Ամերիկայի ներկայ վարչակազմը դադարած է Ռուսաստանը նկատել իր ռազմավարական մրցակիցը: Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին յարաբերություններու պետական քարտուղարութիւնը ներկայիս կը գլխաւորէ Ռիք Թիլլըրսոն, որ մինչեւ վերջերս քարիւղի աշխարհի մեծագոյն ընկերութիւնը նկատուող «Էքսոն-Մոպիլի» ղեկավարն էր: Իսկ այդ ընկերութիւնը միլիարդավար տոլարներու հասնող ծրագիրներ ունի եւ Ատրպէյճանի եւ Ռուսաստանի մէջ: Ասկէ անկախ, նախագահ Տոնալտ Թրամի եւ ատրպէյճանցի օլիգարխներու միջեւ գոյութիւն ունեցող կապերու մասին անդադար տեղեկութիւններ ի յայտ կու գան Ամերիկեան մամուլի էջերուն վրայ:

Ի՞նչ որ ալ ըլլան այս յայտարարութեան դրդապատճառները, ներկայացուած կետերը անընդունելի են առաջին հերթին Արցախի ժողովուրդին կողմէ ու կը պարունակեն խիստ վտանգաւոր շեշտադրումներ: Կարելի չէ վստահիլ միջազգային ապագայ երաշխիքներուն: Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի ճանաչումը նախապայման է եւ միակ երաշխիքը Արցախի եւ հայութեան համար:

«ՄԱՍԻՍ»

Նախաձեռնողի Համաձայն Հոկլանտ Թոյլ Տուած է Որոշ Անճշդութիւններ

Անցեալ շաբաթ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ռիչարդ Հոկլանտ, իր պաշտօնավարման աւարտին հրապարակեց Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման հիմնական կետերը, որոնք համաձայն Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակը պէտք է սահմանուի ապագային՝ փոխադարձ համաձայնութեամբ եւ իրաւական պարտաւորեցնող հանրաքուէով:

Երկրորդ՝ նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սահմաններուն մէջ գտնուող տարածքը, որ Պաքուի վերահսկողութեան տակ չէ, պէտք է ժամանակաւոր կարգավիճակ ստանայ:

Երրորդ՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ գրաւուած տարածքները պէտք է յանձնուի Ատրպէյճանի վերահսկողութեան: Այդ տարածքներու նկատմամբ Ատրպէյճանի ինքնիշխանութիւնը պէտք է վերականգնուի:

Չորրորդ՝ Պէտք է ստեղծուի միջանցք, որ կը միացնէ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ: Այդ պէտք է ըլլայ բաւականաչափ լայն՝ անվտանգ փոխադրումներու ապահովման համար: Սակայն այդ միջանցքը չի կրնար ներառել Լազիսի ամբողջ շրջանը:

Մնացեալ կէտերով դեսպան



Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ Ռիչարդ Հոկլանտ կը խօսի գաղթականներու վերադարձի եւ միջազգային երաշխիքներու մասին:

Այս մասին «NEWS.am»-ի հետ զրոյցի ընթացքին ՀՀ ԱԳ նախարար Էտուարտ Նալբանտեան, մեկնաբանելով Հոկլանտի վերջերս կատարած յայտարարությունը ըսած է որ հոն կան անճշդութիւններ եւ բացթողումներ:

«Ես այսօր արդէն աւելի ունեցել եմ պատասխանելու այդ հարցին եւ նշել եմ, որ դրանք, ընդհանուր առմամբ, արտայայտում են Մինսկի խմբի համանա-

Շար.ը էջ 4

Մարթին Շուլց «Թուրքիոյ Նախագահը Քաղաքական Բռնապետութիւն Ստեղծած է»

Գերմանիոյ Սոցիալ-դեմոկրատներու առաջնորդ Մարթին Շուլց յայտարարած է, թէ Թուրքիոյ նախագահ Էրտողան քաղաքական բռնապետութիւն ստեղծած է:

Շուլց, որ Սեպտեմբերին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն վարչապետ Անկէլա Մերքելի հիմնական մրցակիցն է, կոչ ուղղած է եւրոմիութեան դադրեցնել անդամակցութեան շուրջ Անգարայի հետ բանակցութիւնները:

Ալեյի վաղ Թուրքիոյ եւ այդ երկրի նախագահ Էրտողանի հասցէին խիստ քննադատութեամբ հանդէս եկած էր Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մերքել:

Իսկ ալեյի վաղ Էրտողան Գերմանիոյ ծագումով Թուրք քաղաքացիներուն կոչ ուղղած էր ձայն չտալ Քրիստոնեայ դեմոկրատական, Սոցիալ-դեմոկրատական եւ կանաչներու կուսակցութիւններուն, յայտարարելով թէ «բոլոր այդ կուսակցութիւնները Թուրքիոյ թշնամի են»:

Իսրայել Հրաժարած է Ատրպէյճանին Անօդաչու Սարքերու Վաճառքէն

Ատրպէյճանական լրատուամիջոցները կը յայտնեն, որ իսրայէլական «Aeronautics» ընկերութիւնը ժամանակաւոր կերպով սառեցուցած է «կարեւոր յաճախորդին» 20 միլիոն տոլարի «Orbiter K1» անօդաչու սարքերու խմբաքանակի մատակարարումը:

Կը յայտնուի որ, մատակարարումը պէտք է կատարուէր 2017-2018 թուականներուն: 2016-ին այդ երկրի գնումները կազմած են ընկերութեան եկամուտներու 20%-ը, իսկ 2015 թուականին՝ 18%-ը:

Ընկերութիւնը չէ նշած յաճախորդին անունը սակայն, «Aeronautics»-ի յաճախորդի նկարագրութիւնը կը համապատասխանէ միայն Ատրպէյճանին:

Մի քանի շաբաթ առաջ իսրայէլեան մամուլը գրած էր որ, «Aeronautics Defense Systems» ընկերութեան մասնագէտները մերժած էին ցուցադրել Ատրպէյճանին մատակարարուող նոր անօդաչու սարքերու հնարաւորութիւնները՝ հարուածելով հայկական թիրախները: Ստիպուած՝ ընկերութեան ղեկավարները իրենք անձամբ կատարած են այդ:

Շառլ Ազնաւուր Հոլիվուտի «Փառքի Արահետ»-ին Վրայ Իր Աստղը Ստացաւ



Շառլ Ազնաւուրի աստղի բացման արարողութեան ընթացքին

Հինգշաբթի, Օգոստոս 24-ին, Հոլիվուտի «Փառքի արահետ»-ին վրայ մեծն շանսոնիէ Շառլ Ազնաւուր ստացաւ իր աստղը:

Արդարեւ, այդ օր Ֆրանսահայ աշխարհահռչակ երգիչ եւ յօրինող Շառլ Ազնաւուր մեծ պատիւի մը արժանացաւ «Կենդանի կատարում» դասաւորումին մէջ, իր ընտանիքին, ակնաւոր պաշտօնական հիւրերու եւ բազմահարիւր համակրողներու ներկայութեամբ: Նշենք նաեւ որ Ազնաւուր

ցարդ մեկնաբանած 1300 երգերուն 1200 հատը ինք յօրինած է:

Ազնաւուր իր ելոյթին մէջ անգլերէնով յայտարարեց, որ իր մէջ «կը բնակի» երկու մշակոյթ՝ ֆրանսական եւ հայկական:

Ազնաւուրի աստղը գետեղուցաւ Հոլիվուտի նշանաւոր «Փանթէյճը» դատերասարահին մօտ:

Յիշեցնենք, որ 93-ամեայ Ազնաւուր, ըստ « Los Angeles Time»-

Շար.ը էջ 5

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Առանց «Սասնայ Ծռերու» Ազատութեան Որեւէ Ընդդիմադիր Նախաձեռնութիւն Ոչ Մէկ Արդիւնք Պիտի Տայ». Սեֆիլեան

Սասնայ Ծռերու ազատութեան պահանջը կրնայ դառնալ եւ պէտք է դառնայ այն համախմբող ու կազմակերպող գործօնը, որ պիտի մեկնարկէ Հայրենիքի ազատագրման շարժումը: Այս մասին «Արմաւիր» ՔԿՀ-էն կոչ-յայտարարութիւն տարածած է «Հիմնադիր խորհրդարան»ի անդամ Ժիրայր Սեֆիլեան:



Հիմնադիր խորհրդարանի բանտարկուած անդամ Ժիրայր Սեֆիլեան

«Դիմում եմ քաղաքական, հասարակական, քաղաքացիական, մշակութային եւ այլ ոլորտների հեղինակներ գործիչներին, ովքեր դիտակցում են ստեղծուած իրավիճակի օրհասականութիւնը եւ մտածում են կամ արդէն փորձում են ուղիներ գտնել վերահաս աղէտը կանխելու համար:

«Վերջին տարիներին ձեւաւորուած այնոյս ու գորչ միտքը Սասնայ Ծռերին յաջողութեամբ գրաւել մեր ժողովրդի սիրտը: Եւ այսօր Սասնայ Ծռեր խմբաւորումը վայելում է ժողովրդի սէրն ու անվերապահ վստահութիւնը:

«Ուստի հարկաւոր է ոչ միայն աչքի լռել պէս պահպանել ու զարգացնել Սասնայ Ծռերի նկատմամբ առաջացած սիրոյ ու վստահութեան ռեսուրսը, այլեւ այն լաւագոյնս օգտագործել հասարա-

կական-քաղաքական աքթիւին համախմբելու, ժողովրդին ոտքի հանելու եւ պայքարի ասպարէզ բերելու համար:

«Այդ պատճառով Սասնայ Ծռերի ազատութեան պահանջը կարող է դառնալ եւ պէտք է դառնայ այն համախմբող ու կազմակերպող գործօնը, որը կը մեկնարկի Հայրենիքի ազատագրման շարժումը», մասնաւորապէս ըսուած է Սեֆիլեանի յայտարարութեան մէջ:

Հայաստանի Դպրոցներ Մուտք Պիտի Գործէ 40 Հազար Առաջին Դասարանցի

Սեպտեմբեր 1-ին Հայաստանի դպրոցներ մուտք պիտի գործեն 40 հազար առաջին դասարանցիներ: «Արմենիա»-ի հարցումամբ՝ լրագրողներու հետ հանդիպման ժամանակ այս մասին ըսած է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան հանրակրթութեան վարչութեան պետ Աշոտ Արշակեանը:

«Բոլոր հանրակրթական դպրոցները ապահովուած են դասագրքերով: Այս տարի, ինչպէս եւ նախորդ տարի, 1-ից 4-րդ դասարանների աշակերտները դասագրքերը կը ստանան անվճար: Նախագահի յանձնարարութեամբ՝ այս տարի 38 սահմանամերձ համայնքներում, որոնք պետութեան կողմից ստանում են սոցիալական աջակցութիւն, 1-12 դասարանի աշակերտները դասագրքերը կը ստանան նոյնպէս անվճար», ըսած է Արշակեան:

Անոր խօսքով, բոլոր դպրոցներու շինարարական եւ վերանորոգման աշխատանքները աւարտած են եւ ամբողջութեամբ պատրաստ են պատշաճ կերպով դիմաւորել աշակերտներուն:

«Նայիրիտ» Հրդեհի Երեք Օձախներու Կրակը Ամբողջութեամբ Մարած Է



«Նայիրիտ» գործարանի այրած օձախները

«Նայիրիտ» գործարանի տարածքին հրդեհահաշիջման աշխատանքները շարունակուած են ամբողջ գիշերուան ընթացքին, կը տեղեկացնէ Արտակարգ իրավիճակներու նախարարութիւնը: 29 Օգոստոսին, ժամը 09:00-ի դրութեամբ էթիլոլի պահեստարան հանդիսացող 4 երկաթպեթոնեայ օձախներէն երեքին կրակը մարած է, հրդեհի փոքր օձախ մը մնացած է միայն:

Դէպքի վայրի հրդեհահաշիջման աշխատանքները կ'իրականացնեն եօթ մարտական հաշուարկներ:

Լեռնիկ Ալեքսանեան՝ Փողոցներու Անուանափոխութեան Հիմնաւորումներու Մասին Պէտք Է Զգուշօրէն Օգտագործել Ապագային Բառը



Երևանի աւագանիի անդամ Տիգրան Աւանեան (ձախիմ) եւ քաղաքական գործիչ Լեռնիկ Ալեքսանեան ասուլիսի ընթացքին

«Ելք» խմբակցութեան կողմէ փողոցներու անուանափոխութեան հետ կապուած նախագիծը հակախորհրդային գործողութիւնն է: Լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նման յայտարարութիւն կատարած է Երևանի աւագանիի «Ելք» խմբակցութեան անդամ Տիգրան Աւանեան: Ան շեշտած է, թէ պայքարը խորհրդային ժամանակաշրջանի գործիչներու դէմ չէ, պայքարը յստակ անուններու շուրջ է:

«Քոնքրէթ անուններ, որոնք մեր գնահատականով եղել են ապագային ու ջանք ու եռանդ չեն խնայել, որպէսզի տապալուի ՀՀ առաջին հանրապետութիւնը: Հետեւեալը, նրանց անուններով ոչ միայն փողոցներ ու դպրոցներ չպէտք է լինի, այլեւ յուշատախտակներ: Օրինակ՝ Անաստաս Միկոյեան, Սարգիս Կասեան, Արսէն Ամիրեան, քանի որ նոյն Ամիրեանի հետ կապուած միակ նշանակալից բանն այն է, որ նա գնդակահարուել է Պաքուի 26 կոմիսարների հետ: Մենք առաջարկում ենք նաեւ, որ Ֆրունզէի փողոցն անուանուի ապրիլեան հերոսների անուամբ, իսկ Խաչիկի պողոտան Լենինկրատեանին կապող փողոցը լինի Մոնթէ Մելքոնեանի անունով», ըսած է ան:

Քաղաքական գործիչ, ՀՀ նախկին պատգամաւոր Լեռնիկ Ալեքսանեան նոյնպէս անդրադառնալով թեմային, ըսած է, որ պատմութեան մէջ անուանակոչումները աննպատակ չեն եւ չեն եղած, չեն այլ լլար: «Ընդհանուր առմամբ դէմ չեմ, որ վերագնահատում լինի, որ ժամանակին սխալ թոյլ տուածն ուղղեն: Բոլոր դէպքերում սա հասարակական հնչեղութիւն ունի ու հասարակութեան կարծիքը պէտք է անպայման հաշուի առնեն: Հարցեր կան, որ ես վերա-

պահումով եմ մօտենում, քանի որ հարց է, թէ ի՞նչ կը տայ, ի՞նչ փլիւս կը տայ այս անուանափոխութիւնը: Այսօր, երբ մենք խօսում ենք ազգի միասնութեան մասին, միաւորման մասին, քանի որ մեր ազգը շերտաւորուել է, պէտք է հաշուի առնենք, որ այսօր մեր կողքին կան մարդիկ, որոնք կոմունիստական ժամանակահատուածը շատ լաւ են համարում», շեշտած է Ալեքսանեան, աւելցնելով, որ «ապագային» բառը պէտք է գգուշօրէն օգտագործել:

Վերջինս կը կարծէ, որ այս հարցը պէտք է քննարկուի ոչ թէ քաղաքական, այլ հասարակական համակարգի մէջ: Ալեքսանեան նշած է, թէ հարցը կարելի է քննարկել յստակ անուններու շրջանակին մէջ, միեւնոյն ժամանակ, մատնացոյց ընելով, որ այս կամ այն անհատը դժուար է քննարկել, քանի որ դիւանագիտութիւնը շատ խոր ու գաղտնիքներով լի է:

«Նման որոշումներ կայացնելու համար շատ բան պէտք է ուսումնասիրել, շատ արխիւներ պէտք է վեր հանել: Ապագային ասելու համար պէտք է հաշուի առնել ժամանակի դրոշմը, քանի որ եղել են ժամանակներ, երբ ամէն բան կարող էր կեանք արժեանալ, որը կը խանգարէր նաեւ այլ ծրագրերին», եզրափակած է Լեռնիկ Ալեքսանեան, նկատելով, որ այս ոչ թէ մէկ քաղաքական կուսակցութեան, այլ հասարակութեան խնդիր է:

Դատարաններու Մէջ Խուզարկութիւններու Ենթարկուելու Պատճառով Հայաստանի Մէջ Փաստաբաններու Գործադուլ Պիտի Սկսի՝

Հայաստանի մէջ որոշ փաստաբաններ գործադուլ պիտի սկսին՝ դատարանի շէնք մտած ժամանակ խուզարկութեան ենթարկուելու համար: Այս մասին 23 Օգոստոսին լրագրողներու հետ հանդիպման ժամանակ յայտնած է «Սասնայ Ծռեր»-ու գործով փաստաբան Հայկ Ալումեան:

Փաստաբանը նշած է, որ նման գործողութիւնները ոչ միայն ապօրինի, այլեւ վիրավորական են: Անոր խօսքով, ան անձամբ խուզարկուած է եւ որպէս արդիւնք իրեն թոյլ չեն տուած դատարանի դահլիճ մտնել: Ալումեան ըսած է, թէ պատճառն այն է, որ ինք հրաժարած է յանձնել գրիչը, որ դատարան կատարածունները շրջապատին համար վտանգաւոր համարած են: Սակայն կատարածուններն այդքանով չեն սահմանափակուի:

«Կարող էք պատկերացնել, թէ որքան վատ ու նուաստացած է իրեն գգում փաստաբանը, երբ նրա պաշտպանելի դատարանի դահլիճում բռնուած են ու նկուղային յարկ տանում, որտեղ նրան ծեծի են ենթարկում, իսկ բողոքները հասնում են մինչեւ դահլիճ, որտեղ այդ ժամանակ դատական նիստ է ընթանում», նշած է Ալումեան:

Անոր կարծիքով, Հայաստանի մէջ երբեք նման բան չէ եղած, իսկ փաստաբաններու վրայ այդ աննախադէպ ճնշումը սկսած է գործադուլու 2017 թուականի սկիզբէն: Սակայն փաստաբանը նշած է, որ չի պատրաստուիր միանալ գործադուլին, այլ դատարան պիտի դիմէ՝ փաստաբանական գործունէութեան խոչընդոտելու մեղադրանքով, բան մը, որ քրէական յանցանք է:

Ռուսիա եւ Թուրքիա Ստորագրած են «C-400» Զակառուցող Զամակարգերու Պայմանագիրը

Ռուսիա եւ Թուրքիա ստորագրած են հակաօդային պաշտպանութեան «C-400» համակարգերու առաջնական պայմանագիրը: Այս մասին կը հաղորդէ ռուսական պետական «ՌԻԱ Նովոսթի» գործակալութիւնը: Աղբիւրը երէկ ներկայացուցած է գլխավոր տնօրէն Ալեքսանտր Միխէլէի խօսքերը «Պայմանագիրը ստորագրուած է, սակայն տակաւին ուժի մէջ չէ մտած»:



Ռուս պաշտօնեան աւելցուցած է, որ «աշխատանքը կը շարունակուի, միայն տեխնիկական նրբութիւնները մնացած են»: Միխէլէ չէ մանրամասնած, թէ ռուսական «C-400» քանի՞ համակարգ պիտի վաճառուի Թուրքիոյ եւ Անգարա քաղաքին պիտի վճարէ անոր դիմաց: Ամերիկեան «Jamestown» հիմնադրամի անվտանգութեան հարցերով վերլուծաբան Էտուարտ Աբրահամեանի խօսքով, նման պայմանագիրի ստորագրումը կը նշանակէ, որ Ռուսիա եւ Թուրքիա անցում կը կատարեն խորացած համագործակցութեան: «Այս կը նշանակէ, որ Ռուսիոյ համար Թուրքիան այլեւս պիտի չդիտարկուի որպէս այս տարածաշրջանի հիմնական սպառնալիքը, հիմնական հակառակորդը:

Էտուարտ Աբրահամեան: Նշենք, որ «Bloomberg» գործակալութիւնը տակաւին 13 Յուլիսին հաղորդելով Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ «C-400»-ի շուրջ նախնական պայմանաւորուածութեան կայացման մասին, գրած էր, որ Անգարա Մոսկուային պիտի վճարէ 2,5 միլիարդ տոլար, որուն դիմաց ռուսական կողմը 2018 թուականին «C-400» երկու համակարգ պիտի մատակարարէ, նաեւ պիտի օգնէ, որ Թուրքիոյ մէջ արտադրուին եւս երկու նման համակարգեր:

Գործակալութեան ներկայացմամբ, թէեւ «C-400»-ները չեն կրնար միաձուլուիլ ՆԱՅՕ-ի պաշտպանական այլ համակարգերու հետ, բայց եւ որեւէ խոչընդոտ չկայ, որպէսզի Անգարա զանոնք տեղադրէ Հայաստանի կամ Յունաստանի հետ սահմանին, բան մը, որ հնարաւոր պիտի չըլլար հակաօդային պաշտպանութեան արեւմտեան համակարգերու պարագային:

Էտուարտ Աբրահամեանի խօսքով, յառաջիկային պէտք է սպասել, որ տեղի պիտի կայանան ռուս-թրքական նոր պայմանաւորուածութիւններ:

Կարօ Փայլան Սթանպուլի Զայկական Դպրոցներուն Վերաբերելի Առաջարկ Ներկայացուցած է



Թուրքիոյ քրտամէտ ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլան Սթամպուլի հայկական դպրոցներուն վերաբերելի առաջարկ ներկայացուցած է: Այս մասին կը յայտնէ պոլսահայ «Ակօս» թերթը:

որոնց 13-ը՝ մասնաւոր:

Խօսելով Սթամպուլի 16 հայկական վարժարաններուն մէջ առկայ բազում խնդիրներուն մասին՝ Փայլան առաջարկած է, որ անոնք դեկավարուին մէկ ընդհանուր մարմինի կողմէ, այլ ոչ թէ առանձին հիմնադրամներու, ինչպէս՝ հիմա: Փայլան նկատած է, որ վարժարաններուն մէջ առկայ բազմաթիւ խնդիրները կու գան նաեւ կառավարման ոչ ճիշդ համակարգէն:

Հայկական վարժարաններուն մէջ կրնան ուսանիլ միայն հայ քրիստոնեայ ընտանիքներու զաւակները: Վարժարան ընդունուելու համար անհրաժեշտ է ներկայացնել պատիկին մկրտութեան վկայականը:

«Առկայ խնդիրներուն մեծ մասը կը յառաջանայ այն պատճառով, որ հայկական դպրոցներու ծրագիրներու ֆինանսաւորման եւ միւս հարցերը չեն համակարգուիլ մէկ ընդհանուր մարմինի կողմէ: 2011-էն գործող Հայկական վարժարաններու խնդիրներով զբաղող յատուկ յանձնաժողովի տնօրէնը հրաժարական տուաւ առկայ խնդիրներուն պատճառով, այս հանգամանքը պէտք է սթափեցնէ մեզ», ըսած է հայ պատգամաւորը:

Հայկական վարժարաններուն մէջ առկայ են բազմաթիւ խնդիրներ՝ կապուած թէ՛ նիւթական եւ թէ՛ կառավարման եւ աշակերտներու ներգրաւուածութեան հետ:

Շատ վարժարաններու մէջ այս տարի առաջին դասարաններ պիտի չբացուին՝ աշակերտներ չունենալու պատճառով:

Ներկայիս Սթամպուլի մէջ կը գործէ 16 հայկական վարժարան,

Վարժարանները կ'աշխատին բարերարներու յատկացուցած օգնութիւններուն եւ եղած վարձավճարներու հաշուին:

Թուրք Յատուկ Զոկատայինները «Ծայտել» Զայերու Դէմ Ուղղուած Արշաւ Սկսած են

Թուրքիոյ Տիարպէքիր նահանգի Հազգօ գիւղի 76-ամեայ բնակչուհի պատմած է, որ Թուրք յատուկ Զոկատայինները, հայ ըլլալով մէջ կասկածելով, զինք ճնշումներու ենթարկած են: Այս մասին կը յայտնէ «Ակօս» պարբերականը:



Քրտական Հազգօ գիւղի բնակչուհի Սանիէ Էքթին իր թոռնուհիին պատմած է, որ իրենց տուն այցելած են քաղաքացիական հագուստով Թուրք յատուկ Զոկատայիններ եւ հայերէն խօսած:

Թեան տակ է:

Անոնք քիւրտ կնոջ տան մէջ «Աստուածաշունչ» տեսնելով, հայերէն ըսած են. «Եթէ հայ ես, քողարկելու կարիք չկայ, անկեղծ ըսէ մեզի»:

«Ակօս»-ի հետ զրուցած է Սանիէ Էքթինի թոռնուհի մէլլան Աքչա, որ պատմած է, թէ իր մեծ մայրը քիւրտ իսլամ է եւ երիտասարդ օրերուն մասնակցած է քրտական շարժումներուն:

Տիարպէքիրի Հազգօ գիւղը գլխաւորաբար քիւրտերով բնակուած է, որոնք կ'աշակցին քիւրտերու անկախութեան համար պայքարող Քիւրտիստանի բանուորական կուսակցութեան, եւ այդ պատճառով գիւղը մշտապէս Թուրք յատուկ Զոկատայիններու հսկողութեան տակ է:

Թուրք ոստիկաններուն մօտ կասկած առաջացուցած է տան գրադարանին մէջ «Աստուածաշունչ»-ի առկայութիւնը:

Շառլ Ազնաւուր Զոլիվուտի «Փառքի Արահետ»-ին Վրայ

Մեծն շանսոնիէն ամբողջ աշխարհի մէջ աւելի քան 180 միլիոն ձայնասկաւառակ վաճառած է: Բացման արարողութեան ներկայ գտնուեցան եւ ելոյթ ունեցած են Քալիֆորնիոյ սենատոր Քեւին տէ Լէօ, Փիթոր Պոկտանովիչ եւ այլք: «Փառքի արահետ»-ին վրայ Ազնաւուրի աստղը 2618-րդն է:

Թուրքիոյ Ազգային Զերոս Զայուն Զոգեհանգիստը Զայկական Եկեղեցւոյ մէջ Կատարած են



Պոլսոյ հայկական Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած է թրքական զօրքերու կազմին Կիպրոսի մէջ գործողութիւններու մասնակցած եւ «Կիպրոսի Զերոս» կոչումը ստացած Մուրատ Միհրանի հոգեհանգիստը: Թրքական «Yenikapihaber» կայքի փոխանցմամբ, Մուրատ Միհրանի թաղման արարողութիւնը կազմակերպուած է ամբողջովին զինուորական կարգով, որուն մասնակցած են պատուոյ պահակախումբի զինուորականներ եւ բարձրաստիճան զինուորականներ: Մուրատ Միհրանի դագաղը եկեղեցի բերուած է պատուոյ պա-

հակախումբի զինուորներուն կողմէ, որմէ ետք հայ հոգեւորականները հոգեհանգիստեան արարողութիւն կատարած են: Այնուհետեւ Մուրատ Միհրանի դագաղը տեղափոխած են Պալլաքլի հայկական գերեզմանոց, ուր ամփոփած են մարմինը: 64-ամեայ Մուրատ Միհրան 1974-ին մասնակցած է Կիպրոսի մէջ թրքական կողմի գործողութիւններուն եւ ստացած «Կիպրոսի Զերոս» կոչումը: Այնուհետեւ ան Պոլսոյ «Փակ շուկայ»-ին մէջ ոսկիի տարաւարներ բացած է եւ մինչեւ օրս որպէս յաջողակ եւ սիրուած ոսկերիչ եղած է:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՏՊԱԻՈՐԻՉ ԵԼՈՅԹԸ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի ծրագրերի անհրաժեշտ մասնակցի և զարգացման գործընկերի անունով գեղարուեստական բարձրորակ համերգ մը տեղի ունեցավ Շաբաթ 26 Օգոստոս, 2017, Գալիֆորնիոյ Լա Գան-իաստա քաղաքի Լանդերման հանդիսասրահին մէջ: Պարախումբի յանձնախումբի պատասխանատուներէն՝ Յարութ Տէրվիչօղլեանի ողջունի խօսքէն ետք գործադր-

ուեցաւ շուրջ երեք տասնեակ գեղարուեստական, ազգային եւ միջազգային պարեր, որոնք իրենց գունագեղութեամբ, համաչափութեամբ ու ներդաշնակ կատարումներով մեծապէս ոգեւորեցին ներկայ հանդիսատեսները: Ասմունքով իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Զուարթ Ֆրոյեանը: Այս առթիւ Կլեմէյլի քա-

ղաքապետ տիար Վարդան Կարապետեան եւ Քաղաքապետական Խորհուրդի անդամ Վրէժ Աղաճանեան բեմ ելլելով, գնահատեցին պարային համոյթի ելոյթները եւ շնորհաւորագիր յանձնեցին Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարի համոյթի հիմնադրութեան ծրագրի անունով: Իր հերթին ՆՍՄՄի վարչութեան անունով ատենապետ Յարութ Տէր

Դաւիթեան չատուկ գնահատագրեր յանձնեց գեղարուեստական ղեկավար եւ պարուստոյց Վարդուհի Միննասեանին եւ պարախումբի գլխաւոր պատասխանատու Արմինէ Լաչինեանի: Նոյն չիշատակելի միջոցառումը վերջ գտաւ Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ՝ Տ. Սարգիս Քհնյ. Փեթոյեանի աղօթքով:

Ս.Դ.Հ.Կ. ՍԱՊԱՅ ԳԻՒԼ ՄԱՍՆԱԾԻՐԻ ԸՆԿԵՐԱ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՆ



Հարաւային Գալիֆորնիոյ վէլիի շրջանի Ս.Դ.Հ.Կ. Սապահ Գիւլ մասնաճիւղի տարեկան գլխաւոր միջոցառումներէն մին հանդիսացաւ ընկերա-ընտանեկան շքեղ երեկոն, որ տեղի ունեցաւ Շաբաթ 19 Օգոստոսի, 2017 Յարութ եւ Լիւսի Պոյամեաններու առանձատան ընդարձակ պարտէզին մէջ:

Արդարեւ մասնաճիւղի դամայներն ու այլ շրջաններէ ժամանած հիւրերը, շուրջ 200 հոգի, իրենց տեղերը գրաւած էին տօնական պատշաճ յարգարանքներով գեղեցկօրէն դասաւորուած սեղաններու շուրջ:

Յանձնախումբի անունով ընկերուհի Լիւսի Պոյամեան ողջունի ջերմ խօսքերով հիւրերը դիմաւորելէ ետք յաջողութիւն եւ բարի ժամանց մաղթեց բոլորին: Իսկ մասնաճիւղի ժրջան ատենապետ ընկ. Յարութ Պոյամեան իր ելոյթին մէջ ողջունեց ներկաները, միաժամանակ պարզեց վարչութեան յառաջիկայի օգտաշատ ծրագիրները:

Նշենք նաեւ որ երեկոյին ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան ատենապետ ընկ. Տօքթ. Համբիկ Սարաֆեան, ինչպէս նաեւ վագֆէն խոտանեան, խաչիկ Քէշիշեան եւ շրջանի վարիչ Մարմնի եւ քոյր կազմակերպութեանց ղեկավարներ եւ այլ հիւրեր:

Օրուան հանդիսավար եւ Հ.Մ.Մ.ի պատասխանատուներէն վարդան Գօճապապեան իւրաքանչեւ գուարթախօսութիւններով ոգեւորեց ներկաները: Հայկական եւ Եւրոպական ժողովրդային երգերով մթնոլորտը խանդավառեց էսթրատային ծանօթ երգիչ խաչիկ Զէնեան մենեքներով հանդէս եկաւ նաեւ Ն.Ս.Մ.Մ.ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեանը, որ իր ընտրանի կարգ մը երգերով յաւել-

եալ ներդրում մը ունեցաւ գեղարուեստական բաժինին մէջ:


Տնային պատրաստութիւն եղող համադամ աղանդներն ու կողքին տեղի ունեցաւ նաեւ մասնաճիւղի ընկերներու կողմէ խաղաղական Ուկրաինայի մէջէն որսացուած ձուկի յատուկ սպասարկութիւն:

Երկար ժամեր տեւող ընկերա-ընտանեկան յիշատակելի երեկոյի աւարտին տեղի ունեցաւ վիճակահանութիւն: Տասնեակ մը բախտաւորներ ստացան իւրաքանչեւ նուէրներ:

Սոյն միջոցառումի ուրախ մթնոլորտին խանդավառուած տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, որոնց ցանկը կուտանք ստորեւ եւ որոնց համար կազմակերպիչ յանձնախումբը շնորհակալութիւն կը յայտնէ:

- Մի ոմն \$500
- Տէր եւ Տիկին Թադէոս Քէօրօլեան \$300
- Տէր եւ Տիկին Վարդան Քէօրօլեան \$200
- Կիկիկեան Բարեգործական Միութիւն \$300
- Տէր եւ Տիկին Գէորգ Թաւուզճեան \$200
- Տէր եւ Տիկին Պետրոս Խոտանեան \$200
- Հ.Մ.Մ. \$200
- Տէր եւ Տիկին Ա.Ս. Մազմանեան \$200
- Տէր եւ Տիկին Գրիգոր Մոլոյշեան \$100
- Մի ոմն \$100
- Տէր եւ Տիկին Վարդան Գօճապապեան \$100
- Տէր եւ Տիկին Գրիգոր Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկին Տիգրան Սարաֆեան \$100
- Տիգր Գէորգ Գալուստեան \$100
- Տէր եւ Տիկին Ա.Ս. Ղարիպեան \$50

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՍԵՉՅԱՆԻ «ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐԸ» ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՀԱՏՈՐԻՆ



ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ձորեքշաբթի, 16 Օգոստոսի երեկոյեան, գրասէր բարեկամներու ու հասարակական գործիչներու ժամադրավայրն էր Կլենտէյլի Հայ Կաթողիկէ աթոռանիստ եկեղեցւոյ Գույումճեան հանդիսասրահը: Կազմակերպութեամբ եւ հրաւերով Լոս Անճելըսի Թէքէեան Մշակութային Միութեան վարչութեան, քաղաքս կը գտնուէր հայրենիքէն ժամանած հրապարակագիր, պատմաբան ու բանասէր Երուանդ Տէր Խաչատրեանը՝ ներկայացնելու Փանոս Թերլեմեզեանի «Կեանքիս յուշերը» նոր հրատարակուած հատորը: Արդարեւ, Տէր Խաչատրեան Միացեալ Նահանգներ կը գտնուէր ԹՄՄ Միացեալ Նահանգներու եւ Քանադայի Կեդրոնական վարչութեան հրաւերով ու Նիւ Եորքի եւ Պոսթընի մէջ ունեցած ներկայացումներէն ետք ժամանած էր Լոս Անճելըս:

Օրուան յայտագրի բացումը կատարեց վարչութեան ժրջան անդամուհի՝ գրականագէտ Լիլիթ Քէհէեանը ու առաջին հերթին հրաւիրեց երաժշտական ներկայացման համար «Երկնային Տաղերու» զոյգը՝ Սօսին տաւիղով, իսկ Սալբին սրինգով, երեք հայկական մեղեդիներ հրամայեցնելու ներկաներուն:

Ապա, Քէհէեան հանգամանօրէն ներկայացնելէ ետք քաղաքս գտնուող ԹՄՄ Միացեալ Նահանգներու եւ Քանադայի Կեդրոնական վարչութեան ատենապետ՝ ծանօթ հրապարակագիր Երուանդ Ազատեանը, վերջինս իր կարգին պատ-

շածօրէն ներկայացուց միջոցառման գեկուցաբեր Երուանդ Տէր Խաչատրեանը:

Բեմին ետին պատառի վրայ, սահիկներու հերթականութեամբ ցոյց տրուեցան նախ Թերլեմեզեանի ինքնագծանկարը, ու ապա այն յատուկ արուեստի գործերը, որոնք գինք դարձուցած էին տաղանդաւոր ու փնտռուած արուեստագէտ, հայրենիքի խորհրդային տարիներուն:

Տէր Խաչատրեան շուրջ 50 վայրկեաններու ընթացքին, բարձրօրէն տպաւորեց ներկաները իր ներկայացման մօտեցումով, ու ամփոփ ակնարկ մը ընելէ ետք վանի մէջ Թերլեմեզեանի ունեցած յեղափոխական տարիներուն վրայ, ուր մաս կազմած էր Արմենական Կուսակցութեան հիմնադիր կազմին 1885ին: Ապա, իր ունեցած փախստական կեանքը ու բանտարկութիւնը եւ վերջապէս Փարիզի մէջ արուեստի վարժարան յաճախելը ու հաստատուելը Պոլիս, Կոմիտաս վարդապետին հետ ունեցած մտերմութիւնը ու որպէս վերջաբան իր կեանքին, Թերլեմեզեան Խորհրդային Հայաստանի մէջ անցուցած կեանքին վերջին 13 տարիները:

Տպաւորիչ էր բանասէրին ներկայացումը տաղանդաշատ արուեստագէտ ու ազգային գործիչ Փանոս Թերլեմեզեանի «Կեանքիս յուշերը» նուիրուած հատորին:

Միջոցառման փակումէն ետք տեղի ունեցաւ աւանդական դարձած հիւրասիրութիւնը. ներկաները մօտենալով հիւր բանասէրին, մտերմիկ խօսակցութիւններով վայելեցին անոր այցելութիւնը:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____
 Address: _____
 City: _____ State: _____ Zip Code: _____
 Country: _____
 Tel: _____ Email: _____

**OFFICE SPACE FOR RENT
 IN PASADENA**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԱԿՐՈՍՏԻՔՈՍ՝ ՆՈՒՆԷ ԱԲԵՏԻՍԵԱՆԻՆ

Նունէ, քո ծայնով մեզ գերում
Ու տանում ես մեր տուն, Հայաստան,
Նոր շունչ ու ոգի ես բերում
Եւ անանց մի Կարօտ Հայոց Տան...



ՍԱՐՕ ԳԻՈՂԱԿԵԱՆ

Նունէ Աւետիսեանի յայտնութիւնը Լոս-Անձելէսում իրօք, երեւոյթ եղաւ: Քանզի նա յարուսն ովկիանի պէս եկաւ: Եկաւ եւ բերեց իր հետ արուեստագէտի իր տեսակը՝ իմաստուն ու խենթ, խորագգայ ու դիւրաբորբ, նրբագեղ ու երբեմն էլ մանկան նման անօգնական ու անկար, բայց միշտ իր հոգու գաղտնարանում անթեղուած հրաբուխներն ու լաւերը այսօր էլ շարունակում են գործել, ժայթքել, ի ցոյց դնելով ամենքիս նրա հոգու գաղտնարանում անթեղուած լուսակերոն գանձերը՝ Նարեկացի ու Իսահակեան, Սայեաթ Նովա ու Շերամ, Շիրազ ու Սեւակ...

Առանց նրա վարպետ ու հմուտ հանդիսավարութեան՝ մշակութային ձեռնարկումները մեր համայնքում չէին եզրափակվի այն «բուսիկ»-ներով եւ ուղացիներով, որ կարծես սովորական ու բնական են դարձել մեզ համար: Այստեղ գարմանալու ոչինչ չկայ. պարզապէս Նունէն ծնունդ է արուեստագէտների ընտանիքում. հայրը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, ժողովրդական եւ գուսանական երգերի անգուղակական մեկնաբան Վաղարշակ Սահակեանն է, իսկ մայրը՝ ՀՀ վաստակաւոր արտիստ, հայ պոէզիայի հրաշալի գիտակ, անուանի ասմունքող Սիրվարդ Մեսրոպեանը: Եւ մի՞թէ մայրական սրբազնագոյն գեները չեն, որ անցնելով միամորիկ դասերը՝ Նունէին, այսօր նրան դարձրել են հանրաճանաչ, սիրուած ու փնտռուած, հոգեհարազատ ու սրտամօտ անուն մեր

հայրենիքում: Շուրջ մէկ տասնամեակի հասնող նրա թողարկած լազերային սկաւառակներն այսօր մեր առօրեայի անբաժանելի մասն են կազմում՝ լինի տանը, թէ աւտոմեքենայում: Նունէն դարձել է մի մեծ ու անփոխարինելի միջնորդ մեր եւ Հայ դասական գրականութեան երեւելիների միջեւ: Իսկ 20-ամյա «Բարեւ» Մշակութային հեռուստածրագիրը, որի մտայղացման հեղինակն ու տնօրէնը համայնքում ճանաչուած ռեժիսոր Սողոմոն Աւետիսեանն է, այսօր դարձել է մեր բոլորի սիրելի եւ ցանկալի հիւրը, որին զրկաբաց մենք հիւրընկալում ենք մեր տանն ամեն օր: «Բարեւ»-ի հիւրասրահում բազմաթիւ արուեստագէտներ են հիւրընկալուել, «Բարեւ»-ի հեռուստադարանը հարստացնելով թէ իրենց արժանապատիւ ներկայութեամբ եւ թէ իրենց արժէքաւոր իմաստութեամբ:

Նունէ Աւետիսեանն աւարտելով Երեւանի գեղարուեստա-թատերական ինստիտուտի դերասանական բաժինը, այնուհետեւ ուսումը շարունակում է հանրաճանաչ Օստանկինոյի ռեժիսորական կուրսերում:

Անուանի արուեստագէտ-հեռուստալրագրողն այսօր իր գրապահոցում ունի բազմաթիւ դիպլոմներ ու պատուգրքեր, շնորհակալագրեր ու մրցանակներ: Բայց նրա համար յատկապէս թանկ ու անգնահատելի է Յախունտովի անուան համամիութենական ասմունքի փառատունում ստացած գլխաւոր մրցա-

Շար.ը էջ 17

ԳԻՄՐԻԻ ԴՈՄԻԿՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ 30-ՐԴ ԸՆՏԱՆԻՔԸ ՏՈՒՆ ՍՏԱՑԱԲ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՄԲ



18 ք/մ տարածք ունեցող դոմիկում Քոչարեանների վեցհոգանոց ընտանիքն ապրում է արդէն 19 տարի: «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գիւմրի քաղաքի տնակներում ապրող ընտանիքներին վերաբնակեցնելու ծրագրի շրջանակում ընտանիքն այսօր տե-

րդ ընտանիքն է Գիւմրիում, որ դոմիկից տուն է տեղափոխուել «Հայաստան» համահայկական հիմնադրամի աջակցութեամբ: Հիմնադրամը Գիւմրիի տնակներում ապրող ընտանիքներին բնակարաններով է ապահովում 2014-ից: Ընտանիքների վերաբնակեցումը հնարաւոր է



ղափոխուեց հիմնովին վերանորոգուած եւ կահաւորուած բնակարան: Ընտանիքի հայրը՝ Արիստակէս Քոչարեանն ունի երկրորդ կարգի հաշմանդամութիւն, վարում է Երեւան-Գիւմրի միկրոավտոբուսը: Ընտանիքի մայրը՝ Ժաննա Կարապետեանը, բուժքոյր է «Գիւմրի» բժշկական կեդրոնում: Աւագ դուստրը՝ Տաթևը, նոյնպէս բուժքոյր է, աշխատում է «Էսկուլայ» բժշկական կեդրոնում: Միւս երկու դուստրերը՝ Արեւիկը եւ Լուսինէն, ուսանողներ են: Որդին՝ Միշան, դպրոցական է, սովորում է 4-րդ դասարանում: Քոչարեանների ընտանիքը 30-

դարձել 2014-ին Լոս Անձելոսում կայացած Հեռուստամարաթոնի ընթացքում հաւաքագրուած ամբողջ գումարի, յետագայում կատարուած դրամահաւաքների, անհատ բարերարների հանգանակութիւնների, ինչպէս նաեւ Հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի ֆինանսաւորման շնորհիւ: Բնակարաններն ընտանիքի սեփականութիւնը չեն դառնում՝ հնարաւոր վաճառքից խուսափելու համար, այլ տրուած են անհատոց օգտագործման: Բնակարան ստանալու առաջնայնութիւնը տրուած է երիտասարդ եւ/կամ բազմազալակ ընտանիքներին:

MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815

WELCOME HOME & AUTO INSURANCE
Along with all of our other *Trusted Insurance Services*

We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE
(818) 500 9305

Massis Weekly

Volume 37, No. 32

Saturday, September 2, 2017

Israel Halts "Suicide" Drones Exports Amid Azerbaijan Inquiry

TEL AVIV (RFE/RL) — Israel's Defense Ministry has reportedly halted exports of "suicide" drones manufactured by an Israeli company that was accused earlier this month of using them against an Armenian army position at the request of Azerbaijan.

In a statement cited by the Newsru.co.il news service, the company, Aeronautics Defense Systems (ADS), said late on Monday that the ministry's export control agency has at least temporarily banned it from delivering a batch of Orbiter 1K drones to a key foreign client. The statement said ADS was due to supply \$20 million worth of such unmanned aircraft, capable of carrying special explosive payload, to the client in 2017-2018.

The ADS statement did not specify the buyer of the sophisticated weapon, saying only that Israel has close commercial ties with that country. It also attributed the ban to an ongoing inquiry conducted by the Israeli security agency.

The Israeli newspaper "Maariv" reported on August 13 that the agency launched an investigation after receiving a formal complaint stemming from ADS's commercial dealings with the Azerbaijani government. It said ADS representatives traveled to Azerbaijan earlier this summer to finalize a contract for the sale of Orbiter drones to the Azerbaijani military.

The paper claimed that two Israeli drone operators working for the defense company rebuffed Azerbaijani officials' demand to demonstrate the use of the deadly drone by hitting the Armenian position with it. But other, more senior ADS executives agreed to launch the deadly craft on the target,



according to "Maariv."

ADS denied the report, saying that "the operational action was carried out by the purchaser alone."

According to Nagorno-Karabakh Defense Army, the Azerbaijani military most recently attacked its front-line positions with a suicide drone on July 7. The commander of an army unit stationed in northeastern Karabakh said in early August that two of his soldiers were lightly wounded in the incident. No Armenian military hardware was damaged in that drone attack, he said.

The Azerbaijani army heavily used similar suicide drones manufactured by another Israeli company, Israel Aerospace Industries, during the April 2016 hostilities in Karabakh. Baku had received them as part of multimillion-dollar defense contracts signed with Israeli arms manufacturers.

The Israeli weapons sold to Azerbaijan have included not only various types of unmanned aircraft but also air-defense systems and anti-tank rockets.

Armenia has long expressed concern at the Israeli-Azerbaijani arms deals, saying that they undermine international efforts to end the Karabakh conflict. Still, its reaction to the "Maariv" report was rather cautious.

Armenia FM: Hoagland's Statement Contains Inaccuracies and Omissions

YEREVAN -- Richard Hoagland, the outgoing U.S. co-chair of the OSCE Minsk Group met with Armenian and Azerbaijani journalists in Washington, presenting U.S. policy towards the Nagorno-Karabakh conflict resolution.

During the meeting, Hoagland circulated a document outlining key points to guide the political settlement process which has been advanced and repeatedly modified by the U.S., Russian and French mediators over the past decade.

The proposed settlement calls for Armenian withdrawal from virtually all seven districts around Karabakh that were fully or partly occupied by Armenian forces in 1992-1993. In return, Karabakh's predominantly Armenian population would determine its internationally recognized status in a future referendum. "The sides should commit to determining the final legal status through a mutually agreed and legally binding expression of will in the future." "The occupied territories surrounding Nagorno-Karabakh should be returned to Azerbaijani control," according to the statement circulated by Hoagland.

It also says: "There should be a corridor linking Armenia to Nagorno-Karabakh. It must be wide enough to provide secure passage, but it cannot encompass the whole of Lachin district."

Armenian Foreign Minister Edward Nalbandian on Thursday downplayed the significance of



Hoagland's statement. According to the Armenpress news agency, Nalbandian said that the U.S. mediator simply reaffirmed what has for years been stated by the three mediating powers and contained some inaccuracies and omissions,

"The American Co-Chairs has not said anything new. Look at all previous statements and you'll see the same things," Minister Nalbandian told reporters today.

Nalbandian also dismissed suggestions that Hoagland's move was timed to coincide with Wednesday's talks between the Armenian and Russian presidents, which touched upon the Karabakh issue as well. He said that Hoagland simply gave a farewell interview to Armenian and Azerbaijani reporters. "The American Co-Chair's tenure is coming to an end, and he just gave a press conference and spoke about certain issues once again," Nalbandian said.

French Armenian Singer Charles Aznavour Honored with Hollywood Walk of Fame Star

LOS ANGELES (Reuters) - Legendary French Armenian singer Charles Aznavour finally got a star on the Hollywood Walk of Fame on Thursday, capping a more than 70-year career as one of his country's most popular entertainers.


Aznavour, 93, who was born Shahnour Varinag Aznavourian in Paris to Armenian parents, has sold more than 100 million records in 80 countries. He has been described as France's equivalent to Frank Sinatra.

The singer on Thursday described himself as happy at the honor - with reservations.

"The word I can say is happy, and with a part of emotion, of course, because we are far away from my country, from my way of living, from my way of being received by the people," he said at the Hollywood ceremony.

Aznavour began his career peddling his words and music to the Paris boulevardiers of the 40s and 50s - Edith Piaf, Maurice Chevalier and Charles Trenet.

He soon became adept himself at interpreting emotional love songs, re-



cording hits like "She," "Hier Encore" (Yesterday When I Was Young), "Après l'Amour" (After Love) and "La Bohème."

Aznavour is also known for his humanitarian work in Armenia, especially after the 1988 earthquake that killed tens of thousands of people. He was granted Armenian citizenship in 2008 and was appointed in 2009 to be that country's ambassador to Switzerland, a position he still holds.

The star located at 6225 Hollywood Boulevard next to the historic Pantages Theatre.

US Names Andrew Schofer New Co-Chair to OSCE Minsk Group

WASHINGTON, DC -- U.S. interim co-chair of the OSCE Minsk Group, Ambassador Richard Hoagland, is retiring on August 28.

Announcing his plans at a roundtable discussion at the Washington Foreign Press Center, Hoagland, currently the State Department's principal deputy assistant secretary in the Bureau of South and Central Asian Affairs, said he will be replaced by Andrew Schofer, a career foreign service officer who most recently served as charge d'affaires of the U.S. Mission to the International Organizations in Vienna.

"He has experience in the settlement of the Cyprus and other conflicts," Hoagland said. "I think the Secretary of State and the State Department have chosen a brilliant Co-Chair."



Hoagland said the new appointment does not indicate a new approach to some of the thorniest issues in the region, particularly Azerbaijan's autonomous breakaway region of Nagorno-Karabakh.

Azerbaijan “Blacklists” Portuguese Lawmaker for Visiting Karabakh



BAKU — Azerbaijani Foreign Ministry has summoned Portugal’s charge d’affaires over the visit of Portuguese parliamentarian Rubina Berardo to the Nagorno-Karabakh republic in mid-August holding several meetings with officials there.

The Portuguese diplomat said that the MP’s visit was of a private nature, noting that Portugal’s Foreign Ministry posted on its website a notice urging citizens to refrain from visiting Nagorno-Karabakh, according to Foreign Ministry of Azerbaijan.

Portuguese MP Rubina Berardo will be blacklisted by Azerbaijan’s Foreign Ministry, added the spokesman.

During her visit to Karabakh, Rubina Berardo, Member of Portuguese Parliament from Social-Democratic Party, met with Minister of Foreign Affairs Karen Mirzoyan. She was accompanied by Eduard

Sharmazanov, Deputy Speaker of the National Assembly of the Republic of Armenia and Gagik Melikyan, Head of the Armenia-Portugal Friendship Group in the Armenian Parliament.

During the meeting, Karen Mirzoyan presented NKR’s foreign policy priorities and touched upon the activities aimed at achieving progress in the processes of international recognition of the Nagorno Karabakh Republic and peaceful settlement of the conflict between Azerbaijan and Nagorno Karabakh.

The sides also discussed possibilities of establishing practical ties between the two countries. In this regard, Karen Mirzoyan noted that expanding cooperation between Artsakh and different countries would essentially contribute to stability in the region.

Number of Asylum Seekers Increases in Armenia

YEREVAN (Armenpress)—The number of asylum seekers in Armenia has increased in the first half of 2017, according to the data of the National Statistical Service of Armenia.

Most asylum seekers were from Syria, Ukraine, Cuba, Iran, Azerbaijan. The number of foreigners from CIS countries who were granted residence status in Armenia has also increased.

55 people have sought asylum in

the first half of 2017 compared to the 46 of the previous year. This year 25 people from Syria, 9 from Ukraine, 7 from Cuba, 6 from Iran and 4 from Azerbaijan have sought asylum.

4 people have been rejected from the asylum claim.

2055 foreigners were granted residence status in Armenia: most of them were from Russia (451), from Iran (336) and from India (265).

Multiple Blasts Rock Azeri Ammunition Depot Engulfed by Fire

BAKU (RT)—Multiple explosions have rocked an ammunition depot in Azerbaijan, where a fire broke out on Sunday morning. At least six people were injured in the incident. Residents of nearby villages have been evacuated.

The Azeri authorities would not immediately specify the location of the depot, but local media placed it in the Siazan District of north-eastern Azerbaijan.

